

ԷԹՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ Մ. Թ. Ա. XII ԴԱՐՈՒՄ
(«Մոսկի ժողովուրդներ», մուշկեր և ուրալեացիներ)

Ա. Վ. ՔՈՍՅԱՆ

Առաջարկվող հոդվածում փորձ է արվում նորովի մեկնարանելու հայ ժողովրդի կազմավորման ընթացքի հետ անմիջականորեն առնչվող մի խնդիր, որը վերջին տասնամյակներում մշապես գտնվել է մասնադեմոստրի ուշադրության կենտրոնում: Խոսքը Առաջավոր Ասիայի պատմության ճիշտ նախնային ժամանակահատվածներից մեկի ընթացքում (մ. թ. ա. XII դար) Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում գրավոր աղբյուրներով վկայված էթնիկական տեղաշարժերի մասին է, որոնք, համաձայն ուսումնասիրողների մեծ մասի կարծիքի, ուղղակի հետք են թողել հայ ժողովրդի կազմավորման ընթացքի վրա: Քննարկվող էթնիկական տեղաշարժերի մասին այսօր գոյություն ունեն մի շարք արմատավորված ասակեաներ, և առանց լուրջ փաստարկների հաղիվ թե հնարավոր լիներ նոր խոսք ասելու դրանց վերաբերյալ: Սակայն վերջին շրջանում Փոքր Ասիայի մ. թ. ա. XII—XI դդ. պատմության հիմնարար շարքերի շուրջ կատարված և կաարվող ուսումնասիրությունների շնորհիվ ի հայտ են եկել այնպիսի հեռանկարներ, որոնք հնարավոր են դարձնում վերանայելու նախկինում արտահայտված կարծիքները:

Մինչև հոդվածի բուն թեմային անցնելը կարևոր ենք համարում անդրադառնալ էթնիկական տեղաշարժերի երևույթի մի շարք առանձնահատկություններին Առաջավոր Ասիայի պատմության լույսի ներքո, առանց որի հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել խնդրո առարկա հարցի վերաբերյալ:

Հինարևելյան քաղաքակրթությունների պատմության ընթացքում, համաձայն գրավոր աղբյուրների և հնագիտական նյութի, կարևոր դեր են խաղացել էթնիկական տեղաշարժերը, որոնց շնորհիվ աշխարհագրական լայն տարածքներում հաճախ զղախորեն փոփոխվել է ժողովրդագրական պատկերը: Դրանցից կարելի է առանձնացնել ինթա-լուսիական ցեղերի հայանվելը Փոքր Ասիայի կենտրոնական և հարավային շրջաններում¹, սեմական ցեղերի

¹ Փոքր Ասիայում ինթա-լուսիական ցեղերի հայտնվելու ժամանակի շուրջը կան արժեքավոր կարծիքներ: Մասնագետների ճնշող մասը հակված է այն թվադրելու Փոքր Ասիայի վաղ բրոնզեդարյան մշակույթի անկման շրջանով, այսինքն՝ մոտավորապես մ. թ. ա. III հազ. վերջում (A. Goetze. Hittite and Anatolian Studies.—BANE, 1961, p. 319; J. Meilgaard. Anatolia, c. 4000—2300 B. C.,—CAH, v. 1, ch. XVIII, 1962, p. 46ff.; T. Özgüç. Early Anatolian Archaeology in the Light of Recent Research—Anatolia, 7, 1953, pp. 1—3; История Древнего Востока, Ч. 2, М., 1988, с. 120 և այլն):

Հնդեվրոպական նախահայրերի նոր՝ առաջավորասիական վարկածի հեղինակների կարծիքով այդ տեղաշարժը տեղի է ունեցել սանվազն մ. թ. ա. IV հազ. վերջին—III հազ. սկզբին արևելքից, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհից (Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Тб., 1984, т. 2, сс. 895—897):

տեղաշարժային մի քանի ակիթները², խուրըրիների շարժումը գեպի հարավ-արևելյան Փոքր Ասիա մ. թ. ա. XVI դարում³ և այլն: Բոլոր այդ տեղաշարժերի ընդլայնումը մասին լավ պատկերացում են ապահույն ոչ այնքան համաժամանակյա դրավոր աղբյուրները, որքան նշված տարածքների ժողովրդագրական իրավիճակը քիչ ավելի ուշ ժամանակահատվածում: Բանն այն է, որ հաճախ նոր էթնիկական ասարի ներթափանցումը որևէ պետության ծայրամասային շրջան չի արտացոլվում գրավոր աղբյուրներում մինչև այն պահը, երբ այդ էթնիկական միավորը սկսում է գալիս ռազմաքաղաքական ակտիվությունն ուսևորել և անմիջականորեն սպառնալ տվյալ պետության շահերին կամ գոյությունը: Բնականաբար, որոշակի քանակությամբ ոչ մեծ շափերի էթնիկական տեղաշարժեր այդպես էլ աննկատ են անցնում, և հազիվ թե այսօր հնարավոր լինի հայանարները դրանց հետքերը: Ի տարբերություն նման փոքր տեղաշարժերի, գրավոր աղբյուրներով լավ վիճարկված են դեռևս մ. թ. ա. XIV դարից լայն շափեր ընդունած արհեստական (այսինքն՝ բոնի) տեղաշարժերը⁴:

Հենվելով ռազմարևույթ աղբյուրների (պատմական, լեզվական և մշակութային) վերլուծության վրա, կարելի է վստահորեն ասել, որ մ. թ. ա. III—II հազ. անդի ունեցած ոչ մի հայանի տեղաշարժ չբացարձակ արդյունք չի ավել (այսինքն՝ նախկին էթնոսի կաարայալ ընաշնշում կամ վտարում նրա դրաղեցրած ողջ տարածքից)⁵: Ինչ վերաբերում է տեղաշարժերի ընթացքին, ապա անհրաժեշտ է նշել, որ դրանք՝ կախված ասարի տարածքների ընդլայնման պայմաններից ու ընակչության սոցիալ-քաղաքական դորգացման մասնադակից, նույնատիպ չեն եղել: Օադիսային և գետահովտային տարածքներում (Միջագետք, Եգիպտոս), որտեղ ընանություն համար պիտանի մակերեսը սահղծվել էր նախկին ընակչության երկարասև շանքերով (արհեստական ոռոգման սխտեմի անցկացում և մշտական հսկողություն), ընակնարար, նոր ասարի հաստատումը ընթանում էր ոչ խաղաղ ճանապարհով⁶: Զգալիորեն տարրեր է տեղաշարժերի պատկերը հիմնականում նորմալ ընակչիմայական պայմաններ ունեցող տարածքներում (Փոքր Ասիա, Հայկական լեռնաշխարհ): Այստեղ արհեստական ոռոգման

² Նկատի ունենք ամորեյների (արևմտասեմական ցեղեր) համարա երկդարյա աստիճանական ներթափանցումը ողջ Միջագետքի տարածքը (մ. թ. ա. XXI—XIX դդ.), արամեական ռազմաթիվ ցեղերի մշտական շարժումները դեպի Սիրիա, Հյուսիսային Միջագետք և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտք (մ. թ. ա. XIV—IX դդ.):

³ Այս շարժումն ընթացել է խաղաղ ներթափանցման ձևով. որի լավագույն արագույնը քիչ ավելի ուշ կիցցվատնայում (գաշտային և լեռնային կիլիկիա) լուվիա-խուրըրիկոն խուրըրիական և մշակույթի առկայությունն է (O. R. Gurney. Anatolia, c. 1600—1380. B. C.—САН. v. II, ch. XVa, 1966, pp. 18—19):

⁴ Նկատի ունենք ռազմական արշավանքների ժամանակ նվաճված երկրների բնակչության հոծ բնավածների բնի տեղահանությունները, որոնք լայն կիրառում ունեն ինթական կայրությունում, Ասորեստանում և Ուրարտուում:

⁵ И. М. Дьяконов. Типы этнических передвижений в ранней древности.—ДВ IV, Ер., 1983, сс. 5—6:

⁶ Օրինակ, արամեական ցեղերի շարժումը դեպի Միջագետք մ. թ. ա. XIV—XIII դդ. (R. T. O'Callaghan. Aram Naharaim Roma, 1948, pp. 93—119; D. J. Wiseman. Assyria and Babylonia, c. 1200—100) B. C.—САН, v. II, ch. XXXI, 1965, pp. 24—31; Г. М. Аветисян. Ранние сведения о распространении арамейских племен по Северной Месопотамии и Армянскому нагорью.—ИФЖ, 1984, № 3, сс. 37—44), կասիաների կողմից Բարելունի նվաճումը մ. թ. ա. XVIII դարում (История Древнего Востока, ч. 1, М., 1983, сс. 185—191; P. Garelli. Le Proche-Orient asiatique. I'arts, 1969, p. 138—139), հիքոսների արշավանքը Եգիպտոս մ. թ. ա. XVIII—XVII դդ. (История Древнего Востока, ч. 2, сс. 415—421; Ю. Заблоцка. История Ближнего Востока в древности, М., 1989, сс. 177—182):

անհրաժեշտութեան ռացակայութիւնը ռացառում էր տեղաբնիկ բնակչութեան խառնուրդը կաւտակումները նրա դրաղեցրած տարածքի մի փոքր մասում: Քանի որ այդպիսի տարածքների ընդունումը մասնաւոր, որոշ ռացառութիւններով, հավասարապէս կերպով պիտանի էին բնակչութեան համար, ապա այստեղ տեղաշարժերը թուրքաւար ընթացում են խաղաղ ներթափանցման ուղիով, առանց շատ թե քիչ լուրջ ռախումների եկվորների և անդաճիների միջև Դեպի Փոքր Ասիա և Հայկական լեռնաշխարհ ուղղված էթնիկական տեղաշարժերի անմիջական հետևանքը որևէ սահմանափակ շրջանում (կամ շրջաններում) եկվոր տարրի բնակեցումն է: Տեղաշարժերի ընդգրկման տարածքի բնակչութեան քաղաքական կազմակերպութեան աստիճանից կախված, դրանք ընթացում են մասնաւորութեան արժեքը մակարդակներով. պետականորեն շարժմանը կամ մանր իշխանութիւնների մտնասուլած տարածքների դիստրիբուցիոնը անհամաստ ավելի թույլ է, կազմակերպութիւնը՝ ավելի ուժեղ: Ավելորդ չէ հիշել նաև, որ հինարևելյան էթնիկական տեղաշարժերը սուլթանաւար հաստատարած ընդլայն շին կրել: Եկվոր տարրը ոչ թե ողջ զանգվածով է բնակեցնել դեպի նոր տարածք, այլ մաս առ մաս, իր բնակչութեան համար անդ ընտրելով ստեղծարար կամ նույնիսկ անբնակ վայրերը:

Վերջ ասվածը վկայում է էթնիկական տեղաշարժերի բազմաթիւ տարա-անատիպների առկայութեան մասին և, բնականաբար, ցանկացած առանձին տեղաշարժ անհրաժեշտ է ուսումնասիրել միայն ու միայն կոնկրետ պատմա-աշխարհագրական տեսանկյունից:

Հիմա անցնենք խնդրո առարկա էթնիկական տեղաշարժերի քննարկմանը: Ետևը մ. թ. ա. XII դարի ընթացքում եգիպտական և ասորեստանյան աղբյուրներով վկայված երեք խոշոր էթնիկական տեղաշարժերի մասին է, որոնք ընդգրկում են ողջ Փոքր Ասիան, Սիրիան և սրանց հարող շրջանները (Հայկական լեռնաշխարհի արևմուտք և հարավ-արևմուտք, Հյուսիսային Միջագետք): Եզվտո տեղաշարժերը, որքանով որ կարելի է դատել առկա գրավոր աղբյուրներից, շուրջ են (սկզբնաղբյուրներից հայանի երեքին մասնա-գետները ավելացնում են նաև աղբյուրներում շարտացույցած խեթա-լուվիական ժողովուրդների շարժումը)՝ ա) այսպես անսահման «Սոգի ժողովուրդներ», բ) կասկեր, մուշկեր և ուրումեացիներ, գ) խեթա-լուվիացիներ, դ) արամեացիներ: Հնարավոր է, որ վերոհիշյալ տարածքներում տեղի ունենալին նաև այլ տեղաշարժեր, սակայն առայժմ դրանց մասին որևէ վկայութիւն չկա:

Ուսումնասիրվող տեղաշարժերի դրդապատճառների, ընթացքի և հետև-վանքների մասին տմրոզական պատկերացում կաղմելու համար, ըստ իս. անհրաժեշտ է կատարել ևս մեկ շեղում բուն նյութից, ողպեսդր ներկայաց-

7 Ետևրիները՝ Փոքր Ասիայի հարավ-արևելքում, մուշկերը և ուրումեացիները Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում:

8 Յրեանե. արամեացիների շարժումը դեպի Սիրիա, նախկին Մեծանիի տարածք և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններ (տե՛ս 6-րդ ժանոթագրութեան մեջ հղված գրականութիւնը):

9 Տեղաշարժի վերջին տարատեսակի փայլուն օրինակ պետք է համարել արամեական ցեղերի պարբերական ընթացքը դեպի Հյուսիսային Միջագետք, որը սկիզբ առավ Միտանիների անկման ընթացքի վերջին շրջանում (մ. թ. ա. XIII դար), երբ այդ տարածքի մեծ մասում բազմազան վախուժիչ առկայութիւնը թույլ տվեց առփաստանարևակ արամեացիներին ամբողջովի մի շարք վայրերում (մասնաւորապէս, Եգիպտոսի միջին հոսանքներում), Եկվոր արամեացիների՝ նոր տարածքներում հաստատման ընթացքում սիմաղոսից բացահայտութեան մասին վկայում են ասորեստանյան աղբյուրները, որտեղ կատարվում է խոր-րիները և արամեացիների համապատասխան աղբյուրի մասին ընդհանր ընդհանուր թշնամու՝ Ասորես-տանի (տե՛ս Г. М. Аветьян. Государство Митанни. Ереван, 1984, сс. 100--102; J. M. Aun-Rankin. Assyrian Military Power.--САН, v. II, ch. XXV, 1967, pp. 9 - 10):

վեն տեղաշարժերին նախորդող քաղաքական այն իրադարձությունները, որոնցով, անկասկած, պայմանավորված է եղել դրանց ծավալումը:

Մ. թ. ա. XIII դարի երկրորդ կեսին Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում սկսվեց բուռն իրադարձությունների մի տեսական ժամանակաշրջան, որն ի վերջո հանգեցրեց ուժերի վերագասավորման (հեթական կայսրության անկում, մեծ թվով նոր պետական կազմավորումների առաջացում և այլն):

Ասորեստանի հղորացումը, որի առաջին գոհը գարձավ Միտաննին (մ. թ. ա. XIII դարի կեսերին), այդ պետության ակնհայտ նպատակը՝ իր զարգացող տնտեսության և ռազմական կարիքների համար ազատ մուտք ապահովել գեպի Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի հանքային ռեսուրսները, ստիպեց հեթական կայսրության վերջին արքաներին հիմնական ուշադրությունը սեռել հարավ-արևելյան սահմանների ապահովության վրա, քանի որ այլևս գոյություն չունեին խեթամետ Միտաննին: Խաթթիի (այսպես էր կոչվում հեթական կայսրությունը) արքաներ Թուգխալիյաս IV-ը (մոտ մ. թ. ա. 1250—1220 թթ.) և Առնուվանդաս III-ը (մոտ մ. թ. ա. 1220—1200 թթ.), որպես հակակշիռ Ասորեստանի, ստեղծեցին խաթթիի արևելքից և հարավ-արևելքից հարող պետությունների դաշինք: Հավանաբար, հենց այդ նպատակին էր ծառայում Առնուվանդաս III-ի պայմանագիրը հայաստանյան մի շարք մանր պետությունների՝ Կումախայի, Մուրմայի, Պախիուվայի և այլոց հետ¹⁰: Հյուսիսային Սիրիայում խաթթիի կայսերական քաղաքականության շահերի պաշտպանը Կարգամիսն էր, որի իշխող դինաստիան սերում էր խեթական արքա Սուպիլիլուիումաս I-ից¹¹: Վերջապես, խաթթիի դաշնակիցն էր նաև Եգիպտոսը, որին նույնպես ձեռնտու չէր Ասորեստանի հղորացումը, և որը, շնորհիվ Ռամզես II-ի և խեթական արքա խաթթուախի III-ի միջև կնքված դաշնագրի (մ. թ. ա. XIII դարի առաջին կես)¹², ապահովում էր խաթթիի սիրիական տիրույթների անվտանգությունը հարավից¹³:

Ահա այսպիսի իրավիճակում, երբ խաթթիի վերջին արքաները իրենց հիմնական ուշադրությունը ուղղել էին ասորեստանյան սպառնալիքին դիմադրամիջու վրա, նրա արևմտյան և հյուսիսային սահմանները, ընկալնաբար, լուրջ հսկողության կարիք ունեին: Այստեղ, խաթթիին հյուսիսից և արևմուտքից հարող ասարածքներում, գտնվում էին մի շարք պետություններ (Կասկա, Արցավա, Լուկկա, Միրա-Կումալիյա, Միլավանդա և այլն), որոնք հեթական կայսրության գոյության վերջին երկու հարյուրամյակի ընթացքում, օգտվելով խաթթիի արաաքին և ներքին քաղաքական բարդություններից, բաղմիցս լրջորեն անհանգստացնում էին նրան: Արանցից առանձնապես վտանգավոր էր Կասկան, քանի որ խեթերի մայրաքաղաք խաթթուասը գտնվում էր խեթա-կասկական սահմանից ընդամենը մի քանի ասանյակ կիրոմետր հեռավորության վրա: Խեթական աղբյուրների վկայությունների հա-

¹⁰ KUB XXIII, 72; O. R. Gurney. *Mita of Paḫḫuwe*.—AAA, v. XXVIII, 1948 pp. 32—47.

¹¹ J. D. Hawkins. *Kargamis*, RIA, Bd. V, Lief. 1, 1980, p. 429.

¹² M. B. Rowton. *The Background of the Treaty between Ramesses II and Hattusilis III*.—JCS, v. XIII, 1959, 1, pp. 1—11; E. Edel. *Die Teilnehmer die ägyptisch—hethitischen Friedensgesandtschaft im 21. Jahr Ramses' II.*—*Orientalia* v. 38, 1969, S. 177—186.

¹³ Նշված ժամանակաշրջանին են վերաբերում նաև Թուգխալիյաս IV-ի և Առնուվանդաս III-ի կնքած դաշնագրերը Սիրիայի, Կյուսիսային Ժովեզերի և այլ շրջանների պետությունների՝ Ամուրքուի (KUB XXIII, 1+XXXI, 43+XXIII, 37+VIII, 82), Իսմերիգայի (KUB XXVI, 41+XXIII, 68+ABOT, 5; A. Kempinski, S. Košak, *Der Ismeriga-Vertrag*.—*WO*, Bd. 5/2, 1970, S. 191—217) և այլոց հետ:

մաճաւն, Խաթթուսարը բազմիցս ենթարկվել է կասկերի հարձակմանը և նույնիսկ երբեմն նվաճվել է ու ավերվել¹⁴։

Որ Խաթթիից արևմուտք դրուձիւնը նույնպէս կայուն չէր, ապացուցվում է Քուդիսալիյաս IV-ի արշավանքի փաստով դեպի Էգեյան ծովեզերք՝ ընդդէմ Միլլավանդայի (անտիկ աղբյուրների Միլլեթ). վերջինս Ախիւիւսիւսից (Միկենյան պետութիւն)¹⁵ կախալ իշխանութիւն էր (հնարավոր է, նույնիսկ միկենյան դադութ)։ Միլլավանդայի հպատակեցումը¹⁶ Ախիւիւսիւսիւսի զրկեց իր փոքրասիական հիմնական տիրույթից, որը և հանդեցրեց Խաթթիի ու Ախիւիւսիւսի միջև հարարերութիւնների վերջնական խզմանը։ Նյութական և մարդկալին ռեսուրսների փոքրասիական (ինչպէս և առաջավորասիական) աղբյուրի և շուկաների կորուստը¹⁷, ամենայն հավանականութեամբ, պետք է որ խիստ բացասական ազդեցութիւն ունենար սեփական ռեսուրսներից աղքատ մայրցամաքային Հունաստանի տնտեսութեան վրա։ Եվ բնական է. որ Միկենյան պետութիւնը Քուդիսալիսի արշավանքին հասցորդող մամանակաշրջանում փորձեր կապ ստեղծել Փոքր Ասիայի և նրա հարակից առափնյա շրջանների հետ։ Ավելորդ է վիճարկել, որ դա կարող էր արվել միայն ռազմական ուժով։ Խեթա-ախիւիւսիւսական հարաբերութիւնների վերաբերյալ նշվածը, մեր կարծիքով, անմիջական կապ ունի մ. թ. ա. XII դարի սկզբին սկսված էթնիկական տեղաշարժերի հետ (մասնավորապէս, «Մովի ժողովուրդներին»), որին մենք դեռ կանդրադառնանք քիչ ավելի ուշ։

Նլնկելով մ. թ. ա. XIII դարի երկրորդ կեսին Փոքր Ասիայում և նրա հարակից շրջաններում ստեղծված քաղաքական իրավիճակի ընդհանուր պատկերից, կարելի է ենթադրել, որ Խաթթիի հյուսիսային և հարավային հարկավանները հաղիվ թե հավատարիմ մնային նրա հետ կնքված անկայուն կանխտրդելիզ դաշնագրերին¹⁸։ Ավելին, Միլլավանդայի նվաճումը և Ախիւիւսիւսի հետ հարարերութիւնների խզումը ինքնին արդեն ենթադրում է, որ արևմուտքում Քուդիսալիյաս IV-ի հաղթական արշավանքի շնորհիվ ստեղծված կարճատև կայուն վիճակը հղի էր անկանխաբանելի հետևանքներով։

Ահա այսպիսի իրավիճակ էր տիրում ուսումնասիրվող ռեզիոնում մ. թ. ա. XII դարի սկզբին ծավալված լայն էթնիկական տեղաշարժերի նախօրեին։ Մենք նպատակահարմար չենք գտնում մանրամասն քննարկելու այդ շարժումներից մեկը՝ արամեական առաջիւղացումը, քանի որ այն ընթացել է մի քանի դար անընդմեջ (սկսած մ. թ. ա. XIV դարից) և քաղաքական խոշոր ազդեցութիւն աղբյուր չի հանդիսացել, մանավանդ, որ այդ ուղղութեամբ

14 Խեթա-կասկական հարաբերութիւնների մասին տե՛ս E. von Schaller. Die Kas-käer. Berlin, 1965.

15 Մասնագետների մեծ մասը հակված է խեթական աղբյուրների Ախիւիւսիւսի Միկենյան պետութեան հետ նույնացնելուն (հարցի մանրամասն քննութիւնը տե՛ս Մ. Մ. Дьяконов. ПАМ, сс. 107—109; Р. Гордеев. Проблемы гомеровского эпоса. Тб., 1978, сс. 183—187; Т. R. Bryce. The Nature of Mycenaean Involvement in Western Anatolia. — Historia, 38/3, 1989, pp. 3—6 և այլն)։

16 Կամ, համեմայնութեամբ, նրա մի մասի նվաճումը, ինչպէս ենթադրում է Ք. Բրայսը (նշվ. աշխ., pp. 15—17), հավանաբար, խեթերի վերջին հաջողութիւնն էր արևմուտքում։

17 Այդ մասին ակնհայտորեն վկայում է խեթական արքայի հրահանգը իրենից կախալ Ամուրուի կառավարիչ Մուսազամուլային՝ նրա երկրի նավահանդիսատներով Ախիւիւսիւսի և Ասորեստանի միջև իրականացվող տրանսպորտային կապերն արգելելու վերաբերյալ (T. R. Bryce. Op. cit., p. 16)։ Իրանից կարելի է ենթադրել նաեւ, որ Խաթթիի ազդեցութեամբ ուղղորդում գտնվող բոլոր արևելամիջերկրածովյան երկրները, բնականաբար, պետք է խզեին առևտրական և այլ հարաբերութիւնները Ախիւիւսիւսի հետ։

18 Այդպիսի դաշնագրերից կարելի է նշել Քուդիսալիյաս IV-ի և Քարթունտասայի արքա Կուրունտայի պայմանագիրը (ABOT, 57)։

այժմ կատարվում են յուրյ հետազոտություններ¹⁹։ Մնացած երեք անգաշար-
ժերի մասին ստորե կխոսվի՝ ելնելով հարցի ուսումնասիրման ընապավառում
վերջին շրջանում ի հայտ եկած նորագույն փաստերից։

1. «Մովի ժողովուրդներ»

Սկսենք նրանից, թե ինչպիսի աղբյուրներ կան պայմանականորեն նման
հավաքական տերմինով հորշորջվող այս ժողովուրդների մասին²⁰։

«Մովի ժողովուրդները» առաջին անգամ հիշատակվում են մ. թ. ա.
XIII դարի առաջին կեսին եգիպտական փարավոն Ռամզես II-ի արձանա-
գրության մեջ ՏՐԸՆ (շարդաններ)²¹ ձևով։ Ավելի ուշ փարավոն Մերնեպաա-
հը (մ. թ. ա. XIII դարի երկրորդ կես) հայանում է իր հաղթանակի մասին
լիբիացիների դեմ, որոնց աչակցում էին «Մովի ժողովուրդները» (ՏՐԸՆ,
ՖկիՏ. ikws, lk, liš)։ «Մովի ժողովուրդների» ակտիվ գործունեության հա-
յորդ վկայությունը վերաբերում է փարավոն Ռամզես III-ին (մ. թ. ա.
XII դարի սկիզբ)։ Եթե մինչ այս պահը «Մովի ժողովուրդները» արշավանք-
ները զուտ ավարառական նպատակներ էին հետապնդում, ապա Ռամզես
III-ի օրոք դրանք միանգամայն այլ բնույթ ունեին։

Ահա ինչ է հաղորդում փարավոնը մ. թ. ա. 1186 թ. «Ոչ մի երկիր
չդիմացավ նրանց ուժին։ Եթեթիից սկսած, Կեղեն, Կարքեմիշը, Արցախան,
Ալտսիան ոչնչացվեցին։ Նրանք ճամբար քրեցին Ամուրրուի մեջտեղում,
նրանք ոչնչացրին նրանց մարդկանց այնպես, կարծես (վերջիններս) երբեք
չէին եղել։ Նրանք շարժվեցին Եգիպտոսի վրա... (Այդ) դաշինքի մեջ միա-
վորված էին prst, {kr, skrš, dyny և wšš...»²²։

Մասնագիտական գրականության մեջ տարբեր կարծիքներ են հայտնը-
վել «Մովի ժողովուրդների» թե՛ անվանումների ընթերցման, թե՛ էթնիկական
պատկանելություն վերաբերյալ։ Տեղի սղություն պատճառով հարկ չենք հա-
սարում թվարկելու եղած բոլոր կարծիքները։ Նշենք միայն, որ այժմ առա-
մել ընդունելի է համարվում այն կարծիքը, համաձայն որի «Մովի ժողո-
վուրդներ» տերմինի աակ հասկացվել են էգիպտական ժովի կղզիների, հավա-
նաբար, նաև մայրցամաքային Հունաստանի մի շարք հունալեզու և այլա-
լեզու ցեղեր²³։

Հաղվի առնելով այն հանգամանքը, որ Ռամզես III-ի վերոհիշյալ ար-
ձանագրության մեջ պարզորոշ խոսվում է «Մովի ժողովուրդներ» կողմից
Եթեթիի և մի քանի այլ փոքրասիական ու սիրիական պետությունների դախ-

19 Տե՛ս 6-րդ մանթագրության մեջ հղված գրականությունը։

20 «Մովի ժողովուրդների» վերաբերյալ գոյություն ունի հարուստ գրականություն.
P. Mortens. Völkerwanderungen im östlichen Mittelmeer am E. de des 2. Jahrtau-
sends vor Chr.—Altertum, 10, 1964, S. 3-9 R. D. Barnett. The Sea Peoples.—
CAH, v, II, ch XXVIII, 1960; R. de Vaux. La Phénicie et les jeupes de la mer.—
MUSJ, 4, 1960, p. 479-498. Bronze Age Migrations in the Aegean (ed. P. A. Cros-
sland, A. Birchall). Sheffield, 1974; A. H. Jones. Bronze Age Civilization. The
Philistines and the Danites. Washington, 1975 A. Nibbi. The Sea-Peoples and
Egypt. Park Ridge, 1976 և այլն։

21 Եգիպտական հիերոգլիֆային գիրը վերաբառագրում է միայն բաների բազմաթիվ
կազմապարբ, և այդ է պատճառը, որ մասնագետների շրջանում հիշատակվող ցեղանունների
ձայնավորման հարցում կան տարաձայնություններ։

22 Արևնագրության տեսաի թարգմանությունը բերվում է Ի. Մ. Դյակոնովի գրքից
(ՍՊԱՀ, с. 103)։

23 Մասնավորապես, հունալեզու պետց է համարել dyny և {kr-ն (հունական ավանդու-
թյան դասայացիները և տեկոները)։ Մասնագետների մեծ մասը prst-ն նույնացնում է փղշ-
տացիների հետ (ավելի մանրամասն տե՛ս R. D. Barnett. Op. cit. pp. 10—21)։

շխման մասին, մանավանդ, որ խեթական սեպագիր աղբյուրները մոտավորապես հենց այդ նույն ժամանակ (մ. թ. ա. XII դարի սկիզբ) ընգհատվում են, մասնագիտական գրականության մեջ ընդունված է ենթադրել, որ հաթթին և նրա հարևանները գաղարել են գոյություն ունենալ «Մովի ժողովուրդների» արշավանքների ընթացքում: Համեմատաբար վաղ շրջանի աշխատություններում արժատավորվել է ավելի շուտ աքսիոմատիկ, քան փաստական հիմք ունեցող մի կարծիք, ըստ որի «Մովի ժողովուրդները» կաղմակերպել են մի վիթխարի, լայնամասշտաբ արշավանք գեպի Առաջավոր Ասիա²⁴, և այդ ժողովուրդների ահռելի տեղաշարժերի մի ակիք էլ, հավանաբար, հասել է մինչև Հայկական լեռնաշխարհ՝ մուշկերի տեսքով²⁵:

Սակայն վերջին մեկ-երկու տասնամյակում, հենվելով որոշ նոր, ինչպես նաև հին սկզբնաղբյուրների նորովի մեկնարանության վրա, որոշակիորեն մերանայվել են «Մովի ժողովուրդների» արշավանքների և նրանց հետանմիջականորեն առնչվող հաթթիի անկման վերաբերյալ գոյություն ունեցող նախկին պատկերացումները: Համառոտակի ներկայացնենք դրանք:

Առաջին հերթին անհրաժեշտ է նշել իսրայելական խեթագետ Ի. Զինգերի երկու հոդվածները, որոնք նվիրված են հաթթիի անկման: Կարեկցելի էշտմանը և «Մովի ժողովուրդների» շարժմանը²⁶: Ահա հեղինակի հիմնական եզրակացությունները. ա) «Մովի ժողովուրդների» արշավանքները չի կարելի դիտել որպես լավ կաղմակերպված և նախօրոք ծրագրված հարձակում, բ) հաթթիի անկումը համաժամանակյա գործողություն չի ունի. այլ մի պրոցես, որը տեղի է մի քանի տասնամյակ, այսինքն՝ «Մովի ժողովուրդների» հարվածն ուղղված է եղել միայն որոշ խեթական տիրույթների վրա (Փոքր Ասիայի արևմտյան և հարավային առափնյա շերտ, փյունիկյան ժողովուրդներ): Ի. Զինգերը հակված է նաև կասկածի տակ առնելու Ուամդես III-ի արձանագրության մեջ «Մովի ժողովուրդների» կողմից Կարգամիսի նվաճման հավաստիությունը²⁷, քանի որ վերջին աստիներին ի հայտ են եկել երկու կնիք, որտեղ չ'ըշտակվում է Կարգամիսի՝ «Մովի ժողովուրդների» արշավանքի ընթացքում և հետո իշխած մի նոր, նախկինում անհայտ արքայի անուն:

Ի. Մ. Դյակոնովի կարծիքը նշված պրոբլեմների վերաբերյալ, որ հայանըվել է Ի. Զինգերի կարծիքից ավելի վաղ և, բնականաբար, վերջինիս դիտարկումներից անկախ, հետևյալն է: «Մովի ժողովուրդները» ոչ մի կապ չունեն հաթթիի մայրաքաղաք հաթթուսասի կործանման հետ. հավանաբար, այն իրականացրել են հաթթիի մշտական հակառակորդները՝ կասկերը և նրանց:

24 Ի. Բարնետի կարծիքով, արշավանքն ընթացել է երկու հոսանքային ուղղություններով: Նավատորմը կենտրոնացել է Լիկիայի ծովեզրերին (հարավ-արևմտյան Փոքր Ասիա), իսկ ցամաքային ուժերը՝ թերակղզու արևմուտքում: Խաթթուսասի գրավումից հետո շարժվելով հարավ, ցամաքային ուժերը միացել են մի այլ ցամաքային խմբավորման (հունական առասպելական հերոս Մոփսի զորքին), որից հետո այդ միացյալ զորքը գրավել է Սիրիայի և փյունիկյան ծովեզրերի քաղաքները՝ Կարգամիսը, Ուգարիտը, Համատը, Սիզոնը և այլն: Նավատորմը, իր հերթին, նվաճել է Կիպրոսը (R. D. Barnett. Op. cit., pp. 13—14):

25 Ն. Ազոնց. Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 52—53; Կ. Մ. Дьяконов. ПАН, cc.118—119.

26 I. Singer. Western Anatolia in the thirteenth century B. C. According to the Hittite Sources.—An. St., v. XXXIII, 1983, pp. 205—217; Dating the End of the Hittite Empire.—Hethitica, v. 8, 1987, pp. 413—421.

27 Անհրաժեշտ է հաշվի առնել մի կարևոր հանգամանք: Կարգամիս քաղաքում (ժամ. Զերաբլուս, Սիրիայի և Քուրդիայի սահմանի վրա, Եփրատի արևմտյան ափին) ավելի քան մեկզարյա հնագիտական աշխատանքների արդյունքները թույլ չեն տալիս ենթադրելու, որ «Մովի ժողովուրդների» արշավանքների ընթացքում այն կարող էր գրավված լինել (տե՛ս J. D. Iliawkins. p. 434):

գաշնակից արևելյան մուշկերն ու ուրումեացիները, որոնց միացյալ հարձակումը դեպի Վերին Եփրատի ավազան վկայված է քիչ ավելի ուշ՝ ասորեստանյան աղբյուրներում²⁸։

Հարկ է նշել, որ նույնիսկ հաթթիի լիակատար կործանման անսակեախ ամենաջերմ կողմնակիցներից մեկը՝ Ռ. Բարնետը, գտնում է, որ հաթթուսասի գրավման և հրդեհման իրականացնողների թվում էին կասկերը և լուվիացիները, այսինքն՝ ժողովուրդներ, որոնք ոչ մի կապ չունեն «Մովի ժողովուրդների» հետ²⁹։

Վերը բերված կարծիքների շնորհիվ հնարավոր է դառնում նորովի մեկնարանել «Մովի ժողովուրդների» արշավանքների ընդհանուր շնչով հղումը դրանց վրա, ինչպես նաև հաշվի առնելով մ. թ. ա. II—I հազ. լայն տարածում գտած հունական գաղութացման ընդլայնի և ընթացքի համակողմանի ուսումնասիրման տրոլունքները³⁰, կարելի է առաջարկել «Մովի ժողովուրդների» արշավանքների հետևյալ մեկնարանությունը։

Մայրցամաքային Հունաստանի և էգեյան ծովի կղզիների մի շարք հունալեզու (հնարավոր է, նաև այլալեզու) ժողովուրդներ կամ ցեղեր, օգտվելով հաթթիի ժամանակավոր դժվարություններից՝ կապված Ասորեստանի առաջնադասման հետ, հարձակողական ձևով ներկայանան իրականացրին ինքնակազմ կայսրության ծայրամասային շրջանների ուղղութայնում, ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանների, երբ հաթթին ի վիճակի էր լուրջ հակահարված տալու նման ժողահենային ոտնձգություններին, այս անգամ խեթական վերջին արքա Աուպսիլուպիումաս II-ը (մ. թ. ա. XII դարի սկիզբը) անկարող էր հաջողությամբ գործելու ընդդեմ «տաք կետերում»։ Աղբյուրները վկայում են այն մասին, որ նրա օրոք հաթթիում մի քանի տարի շարունակ ուժեղ երաշտ էր և խեթերը հացի պակասը լրացնում էին Եգիպտոսից եկող օգնությամբ³¹։ Ըստ իս, «Մովի ժողովուրդների» արշավանքների մասշտաբների ուժեղացման միտումը հետևանք է Ռամզես III-ի արձանագրության պաթետիկ սճի, որտեղ ներկայացվում է մի խոշոր աղետ։ Մեր կարծիքով, այդ արձանագրության նյութը կարելի է մեկնաբանել շատ ավելի իրատեսական դիրքերից։ Այսինքն, երբ փարավոնը հայտնում է, որ թվարկված բոլոր երկրները զոհ են գնացել նվաճողներին, ապա այն կարելի է բացատրել այսպես. բոլոր այդ երկրները անկարող են եղել արգելելու «Մովի ժողովուրդների» շարժմանը դեպի փյունիկյան ծովաօկերը և Պաղեստին, որոնք անմիջապես ռահմանտևից էին Եգիպտոսին հյուսիսից։

²⁸ И. М. Дьяконов. ДВ IV, Ереван, 1983, с. 7, прим. 3: (Ծննդան հազրեակի քարտեզը (ПАН, с. 102), որտեղ սլացներով նշված են Փոքր Ասիայի առափնյա այն շրջանները, որոնք կարող էին ենթարկվել «Մովի ժողովուրդների» հարվածներին՝ Փոքր Ասիայից մինչև Պաղեստին առափնյա շերտով նրանց ընթացքի ժամանակ նշված անապատն առկա է նաև Գ. Հոկինսի աշխատությունը մեջ (The Neo-Hittite States of Northern Syria and Anatolia.—САН, v. III/1, 1982, p. 372):

²⁹ R. D. Barnett. Op. cit. p. 3.

³⁰ Sht. В. П. Яценко. Архаическая Греция и Ближний Восток. М., 1990, сс. 62—90:

³¹ H. Klengel. „Hungerjahre“ in Hattl.—AoF, Bd. I, 1974, S. 165—174. Եգիպտոսում և Քանանում զնված հացը նավերով հասցվում էր կիլիկյան Ուրա նավահանգիստը, այնտեղից էլ՝ հաթթիի կենտրոնական շրջաններ (I. Singer. An. St., v. XXXIII, 1933 p. 217): Պետք է ենթադրել, որ «Մովի ժողովուրդները» նավատորմը ամեն կերպ խանգարում էր խեթական տրանսպորտային նավերի ընթացքին, և հենց դրանով էլ կարելի է բացատրել խեթական նավատորմի հաղթական ճակատամարտը Ալասիայի (Կիպրոս) ափերի մոտ Մուզպիլուպիումաս II-ի օրոք (KBo XII 38 III 1—15; տե՛ս H. G. Guterbock. The Hittite Conquest of Cyprus Reconsidered.—JNES, v. 26, 1967, pp. 73—81):

Հունական գաղութացման պատմությունը շատ պարզ պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպես կարող էին ընթանալ «Մովի ժողովուրդներին» արշավանքները: Մայրցամաքային Հունաստանի խիստ սահմանափակ հողային և նյութական ռեսուրսների և գերբնակեցվածության միասնությունը օբյեկտիվորեն պայմանավորում էր «ավելորդ» բնակչության պարբերաբար տեղի ունեցող արտահոսքը: Սակայն, ի տարբերություն մայրցամաքային տեղաշարժերի, հունական գաղութացումն ընդգրկում էր միայն առափնյա սահմանափակ տարածքները, որտեղ, կախված տվյալ ռեգիոնի սոցիալ-քաղաքական դարգացման մտկարդակից, ստեղծվում էին կամ հունական պոլիսներ, կամ առևտրական ֆակտորիաներ³²:

Նույնիսկ եթե հաշվի չառնենք հունական գաղութացման առանձնահատկությունները, ամեն դեպքում խիստ դժվար է պատկերացնել առափնյա շրջանների և կոստանդնուպոլիսի ժողովուրդների համատարած շարժումը Փոքր Ասիայի համարյա ողջ տարածքով, և դեռ այն դեպքում, երբ այնտեղ գոյություն ունեին մի շարք ամենևին ոչ թույլ պետություններ հաթթիի գլխավորությամբ, որանո կային հարյուրավոր ամրացված քաղաքներ և բնական արգելքներ «Մովի ժողովուրդներին» արշավանքները, հավանաբար, կարևոր է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջինը՝ զուտ ժողային դարձողություններ, որոնց արդյունքը փոքրասիական առափնյա որոշ կետերում հիմնավորվելն էր (հունական ցեղեր): Երկրորդ՝ զուտ ցամաքային զործողություններ, որոնց արդյունքը փյունիկյան ժովեգերքում և Պաղեստինում փղշտացիները (pist) հաստատումն էր: Վերջին դեպքում առավել հավանական է թվում եկվորների ափհանումը ինչ-որ տեղ հենց նշված շրջանում, այլ ոչ թե շարժումը ողջ Փոքր Ասիայով³³:

Վերջինս նշվածի հիման վրա կարելի է առաջարկել իրադարձությունների հիտույալ հավանական տարբերակը, ըստ որի հաթթիի կենտրոնական շրջանները ենթարկվել են խեթերի ավանգազական հակառակորդների՝ կասեերի և նրանց դաշնակիցների հարձակմանը: Այսպիսի մեկնաբանությունը ունի երկու անուղղակի ապացույց, որոնց մասին կհասմի ստորև:

Փոքր Ասիայի կենտրոնական շրջանների զգալի մասում գտնվող խեթական մի շարք քաղաքներ, համաձայն հնագիտական աշխատանքների արդյունքների, մոտավորապես մ. թ. ա. 1200 թ. սահմանում ավերվել և հրդեհվել են: Դրանից քիչ անց նկատվում է խեթա-լուվիական տարրի ակտիվ զործունենությունը Փոքր Ասիայի արևելյան (ընդհուպ մինչև Եփրատ գետը), հարավ-արևելյան շրջաններում (Հալիս գետի ոլորանից հարավ) և Հյուսիսային Սիրիայում: Մա ենթադրում է խեթա-լուվիական էթնոսի որոշանի տեղաշարժ Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններից դեպի հարավ-արևելք և արևելք հաթթիի անկմանը հաջորդող օսմանակազդաբանում³⁴: Հարց է ծագում, թե ինչու մայրաքաղաքի անկումից հետո խեթական բնակչությունը, լքելով իր բնակության վայրերը, շարժվել է նույն ուղղությամբ, ինչ ուղղությամբ անցել են «Մովի ժողովուրդները»: Ամենի ճիշտ կլինի են-

³² Ուշագրավ է այն փաստը, որ միայն Մերձավոր Արևելքում հունները չկարողացան ստեղծել պոլիսներ, քանի որ այստեղ քաղաքային մշակույթի դարգացման բարձր մակարդակը աննպատակահարմար էր դարձնում զրանց ստեղծումը (B. П. Яценко. Греко-чешская колонизация VII—III в. до н. э. М., 1982, с. 252): Ընդհուպ մինչև Ալեքսանդր սակեոսացու արշավանքները, Փոքր Ասիայի հունական բնակչությունը կենտրոնացած էր էգիյան և Միջերկրական ծովերին հարող առափնյա քաղաքներում:

³³ Հարցի այսպիսի լուծման հնարավորության դեպքում առավել կամրապնդվի այն մասնադեմների հարժիքը, ովքեր մինչև փղշտացիների հայտնվելը Պաղեստինում նրանց տեղադրում են կրկնակի հարցում (հարցի քննարկումը տե՛ս R. D. Barnett. Op. cit., p. 16ff.):

³⁴ J. D. Hawkins. CAH, v. III/1, 1982, p. 372.

թաղրել, որ **Խաթթուաստին սպառնացող վտանգը եկել է ոչ թե արևմուտքից, այլ հյուսիսից:**

Խեթական պետության անկման պրոցեսի բնույթի և զրա հետևանքների վերաբերյալ, մեր կարծիքով, կարևոր նյութ է պարունակվում մ. թ. ա. XII—X դդ. Փոքր Ասիայի հարավ-արևելյան, արևելյան շրջաններում և Հյուսիսային Սիրիայում գոյություն ունեցած լուվիական (այլ մասնագետների աշխատություններում՝ «ուշ խեթական» կամ «նոր խեթական») պետությունների հիերոգլիֆային արձանագրություններում: Մեր ուսումնասիրությունները այս բնագավառում թույլ են ապրիս հանդելու մի շարք կարևոր եզրակացությունների՝ **Խաթթի անկման և Փոքր Ասիայի արածքում տեղ դրած էթնիկական տեղաշարժերի կապակցությամբ:** Որոնք են այս ուսումնասիրության հիմնական արդյունքները³⁵:

1) Մտավորապես մ. թ. ա. XII դարի տաշին կեսին, այսինքն **Խաթթի անկումից քիչ ժամանակ անց, նրա տարածքի զգալի մասում կազմավորվում են երեք խոշոր պետություններ՝ Մելիդը, Կարդամիսը և մի պետություն, որի անվանումը դեռևս անհայտ է (պայմանականորեն կոչում ենք «Խարասպուսի պետություն»):**

2) Դատելով նշված աղբյուրներից, այս պետությունները **Խաթթի անկումից անհապառաճում էին, որոնցից յուրաքանչյուրը համակնում էր կայսերական ավանդույթների շարունակուղի դրին:** Այսինքն, **Խաթթի անկումը փարեի է ներկայացնել ոչ որպես այդ պետության ջախջախում, ինչպես նախադրում են շատ մասնագետներ³⁶, այլ նրա տրոհում երեք խոշոր պետական կազմավորումների, որն արդյունք էր կենտրոնական հյուսիսային թուլացման և կասկերի ու նրանց դաշնակիցների կողմից մայրաքաղաք Խաթթուասի գրավման:**

3) Վերջին կարևոր եզրակացությունը, որը անմիջականորեն բխում է առաջին ֆրիկուսից, մ. թ. ա. XII դարի ընթացքում **Բալկաններից Հայկական լեռնաշխարհ՝ Թրակա-փոյուզական կամ նրանց հետ ինչ-որ առնչություն ունեցող որևէ հնդեվրոպական ցեղի ներթափանցման հնարավորության քիչ հավանական լինելն է:** Այստեղ արդեն անհրաժեշտարար մոտենում ենք էթնիկական տեղաշարժերի հաջորդ խմբին:

2. Կասկեր, մուլկեր և ուրումնացիներ

Մասնագիտական գրասխանության մեջ ըստ ամենայնի քննարկված են այս ցեղերի տեղաշարժերի հետ կապված բոլոր հարցերը³⁷, այդ իսկ պատճառով նպատակահարմար է ներկայացնել միայն մեր համառոտ դիտարկումները **Խաթթի անկման նոր մեկնարանության լույսի ներքո:**

Ասորեստանյան աղբյուրների հաղորդած տեղեկությունների համաձայն,

³⁵ Ուսումնասիրությունը դեռևս լռումն ավարտված չէ. սակայն զրա մի շարք հիմնական եզրակացություններ տեղ են դրել հրատարակության մեջ գտնվող մեր հոդվածում՝

Hartapus and the Problem of the Early History of Tabal. Poznan, 1991.

³⁶ Ահա ընդհանուր է ներկայացնում Խաթթի անկումը Ռ. Բարնետը. «Խեթական կայսրությունը փլուզման վերջավեց մ. թ. ա. 1200 թ. սահմաններում նվաճողների կողմից, որոնց թվում էին, անկասկած, արևելյան սահմանների մոտ գտնվող նրանց ավանդական թըլ-Նամիները՝ կասկերը...» (Phrygia and the Peoples of Anatolia in the Iron Age.— CAH, v. II, ch. XXX, 1967, p. 3):

³⁷ Այս տեղաշարժի հետ կապված հարցերի քննարկումը տե՛ս Ի. Մ. Դյակոնով. ПАН, сс. 123—124: Ի. В. А р у т ю н я н. Византия. Ереван, 1970, сс. 29—35; О. О. К и р а г е з я н. Фрѣкийцы на юго-западе Армянского нагорья.—ИФЖ, 1981, № 1, сс. 218—220 և այլն:

կասկերը (սովելի ճիշտ՝ ապիշուու կոչված ցեղը)³⁸, մուշկերը և ուրումնացիները մոտավորապես մ. թ. ա. 1165 թ. սահմանում ինչ-որ տեղից շարժվել են դեպի վերին եփրատյան Ալզի (Հայկ. Աղձնիք) երկիրը, որտեղից էլ հրսուն տարի անց մտել են Կադմուխի (Տիգրիս գետի վերին հոսանքի շրջանում, հավանաբար, հայկ. Կադմեաց տուն)³⁹, սպառնալով թափանցել բուն ասորեստանյան տիրույթները: Թիգլաթպալասար I-ի (1115—1077 թթ.) մի շարք արշավանքները վերջ են դրել նրանց առաջխաղացմանը. սրանից հետո մուշկերը հաստատվել են Կադմուխում⁴⁰ և Ալզիում:

Նշված ցեղերի էթնիկական տեղաշարժի բնույթը որոշելու համար անհրաժեշտ է պարզել երկու կարևոր հարց՝ ա) ովքե՞ր էին կասկ-ապիշուուները, մուշկերը և ուրումնացիները և որտե՞ղ կարող էին բնակվել նրանք նախքան հիշյալ արշավանքները, բ) ո՞րն էր այդ արշավանքների նպատակը:

Առաջին հարցին կարելի է որոշակիորեն պատասխանել միայն մասնակիորեն: Կասկերը լավ հայտնի խոշոր ցեղամիութուն էին, որոնք ընդհուպ մինչև Խաթթիի անկումը բնակվում էին վեոջինից հյուսիս և հյուսիս-արևելք բնկած հարավմերձսևծովյան շրջանում (մոտավորապես Օրդու-Սինոպ հատվածում)⁴¹: Կասկերի հավանական կապի մասին ամիսագա-ադղյան լեզվախմբի հետ գրվել է վաղուց. և հաղիվ թե այսօր այն լուրջ կասկածների տեղիք չունի⁴²:

Շատ ավելի բարդ է մուշկերի և ուրումնացիների հարցը, քանի որ սրանցից առաջինի հետ համեմատվող ժողովուրդների թիվը առնվազն երեքն է (փոյուզացիներ, նախահայեր և քարթվելալեզու մոսիսեր՝ հետագայի մեսսիսեր)⁴³, իսկ ուրումնացիներն անհայտ են թե՛ նախորդող, թե՛ հաջորդող ժամանակաշրջաններին վերաբերող աղբյուրներին⁴⁴: Քանի որ նման սուղ նյութի մի կառուցված ցանկացած ենթադրություն ոչնչել չի տարբերվի նախկինում եղածներից, այլ մի նոր անլուծելի հանդույց կավելացնի, կփոր-

³⁸ Թիգլաթպալասար I-ի արձանագրություններից մեկում հիշվում են կասկերը, ուրումնացիները (A. K. Grayson. Assyrian Royal Inscriptions. V. II, Wiesbaden 1976, § 12), երկու այլ արձանագրություններում՝ ապիշուուները և ուրումնացիները (նույն տողում, §§ 67, 93), որի հիման վրա կարծիք է հայտնվել, որանց նույնացման կամ ապիշուուներին արգես կասկական մի ցեղ դիտելու մասին (Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 274; И. М. Дьяконов. ПАН, с. 123), որն ընդունվում է մասնաչեաների կողմից:

³⁹ Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985. сс. 98—99:

⁴⁰ Մուշկերի հատարգները հիշատակվում են Կադմուխիում նույնիսկ մ. թ. ա. IX դարում՝ Ասսուրենաթիրպալ II-ի (883—859 թթ.) մոտ որպես Ասորեստանի հարկատուներ (A. K. Grayson. Op. cit., V. II, § 547):

⁴¹ A. Goetze. The Roads of Northern Cappadocia in the Hittite Times.—RHA 61, 1957, p. 92, n. 23; I. Garstang, O. R. Gurney. The Geography of the Hittite Empire, London, 1959 (քարտեզ):

⁴² Տե՛ս, մասնավորապես, Г. Г. Гноргадзе. К вопросу о локализации и языковой структуре касских этнических и географических названий.—ПСБ, № 1, 1961, 161—210; И. М. Дьяконов. ПАН, с. 12 և այլն:

⁴³ Գրություն ունեցող բոլոր տոսակետների քննական տեսությունը տե՛ս И. М. Дьяконов, ПАН, сс. 214—224:

⁴⁴ Ուրումնացիների և համերոսյան արիմների նույնացման, ինչպես նաև սրանց հայ ծագվածի կազմավորման միջուկ դիտելու մասին վարկածը տե՛ս Ս. Երեմյան. Հայրենի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում.—ՊՐՀ, 1958, № 3, էջ 59—74, հիմտ. ի. Գյակունովի մեկնարանությունը այս մարկածի վերաբերյալ (ПАН, сс. 224—227): Տե՛ս նաև Գ. Խ. Մարզայանի կարծիքը (Բ. Ն. Առաքելյան, Գ. Խ. Մարզայան, Գ. Բ. Զեհուկյան. Ուրարու-Հայաստան. Երևան, 1988, էջ 57—59):

ձեռք զերծ մնալ ստուգարանական ճահճից, Ինչպիսի՞ մոտեցում կարելի է ցուցարբերել այս պրոբլեմին: Նշենք մի քանի կարևոր ուղենիշներ, որոնց համադրումը, մեր կարծիքով, ի վիճակի է որոշակիորեն պարզելու այն:

Այսպես, հաթթիի անկման պրոցեսի վերը առաջարկված պատկերից մոտավորապես պարզ է դառնում մի հանդամանք. հաթթիի հյուսիսային շրջանները զոհ են դնացել կասկերի հարձակմանը: Սակայն հարց է ծագում, թե ինչ կապ ունեն կասկերը (համենայնդեպս, նրանց միության անդամ ցեղերից մեկը) հաթթիի կենտրոնական շրջաններից այդքան հեռու հատվածում: Մեր կարծիքով, կապը ավելի քան անմիջական է. եթե հաշվի առնենք հաթթիի պատմության վերջին երկու դարերում (XV—XIII) պարզորոշ փեթակ ուղղված է եղել հաթթիի դեմ⁴⁵, Ինչո՞ւ չենթադրել, որ այս դաշինքը կարող էր առկա լինել նաև մ. թ. ա. XII դարում:

Հաջորդ կարևոր նրբերանգը Թիզլաթպալասար I-ի արձանագրություններում տեղ գտած թվական տվյալներն են դաշնակիցների քանակի վերաբերյալ. կասկերն ու ուրումեացիները՝ 4 000, մուշկերը՝ 20 000: Հետևորար, կարելի է ենթադրել, որ այս արշավանքների թատերաբեմը ավելի մոտ էր դառնվում մուշկերի, քան կասկերի (դուցեև ուրումեացիների) նախկինում զրադեցրած տարածքին:

Եվ, վերջապես, մ. թ. ա. 1165—1115 թթ. ընթացքում անդի ունեցած արշավանքների զրդապատճառների մասին: Դառնելով Թիզլաթպալասար I-ի արձանագրություններից⁴⁶, դաշնակիցների և նրանց կողմից արշավանքների ընթացքում զրադեցրած տարածքի ընակչության փոխհարաբերությունները: ամենևին թշնամական չեն եղել. այս մասին են վկայում ասորեստանյան քանակի հաջորդարար տրված ճակատամարտերը թե՛ եկվորների, թե՛ տեղացիների դեմ: Անկախ այն լրանից, թե ինչ էթնիկական կազմ ունեին Ալզին և Կադմուխին (խուրրիական, սեմական, հայկական կամ այլ), նրանց ընակչությունը, հավանաբար, եկվորներին չի դիտել որպես նվաճողներ: Որ Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավ-արևմտյան շրջանների ընակչությունը ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ասորեստանի նկատմամբ վարող էր թշնամական վերաբերմունք ունենալ, կասկածից վեր է: Հիշենք թեկուր Թուկուլթի-նինուրտա I-ի (1244—1208 թթ.) պատերազմները և դրանց ընթացքում տեղ գտած խոշոր ավերածությունները «Նաիրյան երկրներում»⁴⁷: Ի տարբերություն հաթթիի՝ իրեն հարող մանր պետությունների հետ հարաբերությունները հնարավորության սահմաններում պայմանագրերի միջոցով կարողավորման քաղաքականության, Ասորեստանի քաղաքականությունը տրամադծորեն այլ էր. հաճախակի արշավանքներ, որոնց նպատակը նյութական և մարդկային ռեսուրսների հայթայթումն էր: Նկատի ունենալով վերոհիշյալը, մենք հակված ենք կասկա-մուշկա-ուրումեական տրշավանք-

⁴⁵ Կասկա-հայասական համատեղ հակախճական ձևնադրումները վկայված են դեռևս մ. թ. ա. XV դարի վերջից՝ Թուրքալիյաս III-ի շրջանում: Այս դաշինքի ռանձգությունների հիմնական թիրախը այսպես կոչված «Վերին երկրներն էին» (հաթթիի հյուսիս-արևելյան շրջանում). որի խիստ կարևոր ստրատեգիական նշանակությունը դրդել էր խեթերին այստեղ նառուցել պաշտպանական ասրությունների մի ողջ շղթա. այն ձգվում էր Խակպիս քաղաքից (ժամ. Ամասիա) մինչև խեթերի պաշտամունքային գլխավոր կենտրոններից մեկը՝ Ներիկ քաղաքը (հավանաբար, ժամ. Կարզա) (ան՝ս. Д. Ж. Г. Маккупн. Хетты и их современники в Малой Азии. М., 1983, сс. 91—92):

⁴⁶ A. K. Grayson. Op. cit., II, §§ 12—15, 19, 66, 67, 92, 93.
⁴⁷ Նույն տեղում, I, §§ 773, 783, 795, 798, 803: Նաիրյան արշավանքին նախորդել էին մի շարք խոշոր արշավանքներ դեպի նույն Կադմուխի, Ալզի, Պուրուկուզի և նրանց հարակից «երկրներ» (§§ 692, 693, 715, 721, 760, 773, 783, 803, 806, 811, 819):

ները դիտել որպես պատասխան հյուսիսում Ասորեստանի վարած թալանչիական քաղաքականության:

Բայց և այնպես, վերը արված մեկնաբանությունները դեռևս ոչինչ չեն ասում մուշկերի և ուրումեացիների էթնիկական պատկանելության և նախնական բնակության վայրի մասին: Երանք վկայում են միայն այն մասին, որ նշված էթնիկական միավորներին պետք է փնտրել Հայկական լեռնաշխարհի ինչ-որ շրջանում: Ի՞նչ կարելի է առաջարկել հարցի ուսումնասիրման ներկա վիճակում:

Նշենով կասկ-ապիշլունների մոտավոր տեղադրությունից Սև ծովի հարավային և հարավ-արևելյան մերձափնյա շրջաններում, ինչպես նաև կասկա-հայասական հնարավոր դաշինքի մասին ենթադրությունից, դուցե անհիմն չի լինի մուշկերին ու ուրումեացիներին համարել հայասական ասարածքի բնակիչներ⁴⁸, Համենայնդեպս, հարցի նման լուծման հնարավորությունը ոչընչով չի զիջում մուշկերի բալկանյան ժողովան վարկածին: Ավելին, այս ենթադրությունը առավել հեռանկարային է հնդեվրոպական նախահայրենիքի առաջադրասիական տեղադրման վարկածի տեսանկյունից: Եթե Քիզլաթ-պալասար I-ի մուշկերը կապ ունեն թրակա-փոյուզացիների հետ, ապա ինչու չենթադրել, որ նախալեզվի տրոհմանը հաջորդող շրջանում այդ խոշոր լեզվախմբի կրողների մի մասը (կամ մեկը) չի լքել իր նախնական բնակության վայրը կամ էլ կատարել է փոքր տեղաշարժ: Այս առումով անհրաժեշտ է նշել Գ. Բ. Ջահուկյանի ենթադրությունն այն մասին, որ հայասական տարածքում հնարավոր է թրակյան ինչ-որ ասարի առկայությունը դեռևս նախքան մ. թ. ա. XII դարը⁴⁹: Մուշկերի և ուրումեացիների հայասական տեղադրման ուշադրավ փաստարկ կարելի է համարել նաև Գ. Խ. Սարգսյանի կողմից նկատված մուշկու-ուրումու և Խորենացու «Հայոց պատմություն» մեջ հիշատակվող Աբամ-Մշակ ղուլգերի նմանությունը⁵⁰: Սրանց կարելի է ավելացնել նաև հետևյալ ենթադրությունը. դուցե թրակացի մուշկերի և հայալեզու ուրումեացիների համաանդ բնակության հանգամանքն է հիմք հանդիսացել ավելի ուշ շրջանի հույն հեղինակների համար դրելու հայերի և փոյուզացիների միջև լեզվական և կենցաղային նմանությունների մասին (Հերոդոտ, Եվդոքսոս Կնիդոսցի): Վերջապես, մեր կարծիքով, անհրաժեշտ է նշել Ս. Պետրոսյանի ուսումնասիրությունների արդյունքները՝ կապված Գուդարքում, Տաշիրքում, Շիրակում, Արշարունիքում և Վանանդում թրակա-կիմմերական էթնիկական ասարի առկայության հետ⁵¹: Ճիշտ է, հեղինակի կարծիքով հիշյալ տարրը Հայկական լեռնաշխարհ է ներթափանցել հյուսիսմերձսևծովյան շրջանից՝ կովկասյան ուղիով, սակայն հարկ է ասել, որ այդպիսի տեղաշարժի մասին վկայող որևէ աղբյուր (գրավոր կամ հնագիտական) առայժմ չկա, այսինքն, ամենևին պետք չէ բացառել նշված լեզուների կրողների՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում ի սկզբանե բնակության հնարավորությունը:

48 Հմմտ. Գ. Խ. Սարգսյան. նշվ. աշխ., էջ 58—59:

49 Գ. Բ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987, էջ. 338—339. այս եզրակացությունը հեղինակը հանգել է հայասական հատուկ անունների՝ հնդեվրոպական, խորի-ուրարտական և կովկասյան լեզուների լայն նյութի վրա կառուցված հիմնավոր ստուգաբանությունների շնորհիվ և անտեսել այն, մեր կարծիքով, խիստ դժվար է ու անպատակահարմար:

50 Գ. Խ. Սարգսյան. նշվ. աշխ., էջ 59:

51 Տե՛ս Ս. Պետրոսյան. Թրակա-կիմմերական ցեղերի միությունները Հայկական լեռնաշխարհում (մ. թ. ա. VI—V դդ.)—ՊՔԸ. 1977, № 1, էջ. 207—220: Նույնի՝ Հին թրակյան էթնիկական տարրը հնագույն վանանդում,— «Լրաբեր», 1977, № 8, էջ 32—40: Նույնի՝ «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ. թ. ա. VI—V դդ.)—«Լրաբեր», 1979, № 1, էջ. 65—75:

ՀԱՐԱՎՈՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԻՄ

- ДВ—Древний Восток, Ереван
 ПАН—И. М. Дьяконов. Предыстория армянского народа, Ереван, 1968
 ПСБ—Перднеазиатский сборник, Москва
 ААА—Annals of Archaeology and Anthropology, Liverpool
 АВоТ—Ankara Arkeoloji Müzesinde bulunan Bogazköy Tabletleri, İstanbul, 1984
 An. St.—Anatolian Studies, London
 АоF—Altorientalische Forschungen, Berlin
 САН—Cambridge Ancient History, Cambridge
 JCS—Journal of Cuneiform Studies, New Haven
 JNES—Journal of Near Eastern Studies, Chicago
 КВо—Keilschrifttexte aus Boghazköi, Leipzig und Berlin
 КУВ—Keilschrifturkunden aus Boghazköi, Berlin
 MUS.—Mélanges de l'Université Saint-Joseph, Beyrouth
 RHA—Revue Hittite et Asiatique, Paris
 RIA—Reallexikon der Assyriologie und vorderasiatische Archäologie, Berlin
 New York
 WO—Die Welt des Orients, Göttingen

ЭТНИЧЕСКИЕ ПЕРЕДВИЖЕНИЯ В МАЛОЙ АЗИИ И НА АРМЯНСКОМ
 НАГОРЬЕ В XII В. ДО Н. Э.
 («Народы моря», мушхи и урумейцы)

А. В. КОСЯН

Резюме

На основании предложенной новой концепции падения Хеттской империи на грани XIII—XII вв. до н. э. пересматриваются проблематичные вопросы, связанные с этническими передвижениями ряда народов и племен, имевших место в пределах западной части Армянского нагорья и в сопредельных областях. Господствующее в ассириологической литературе мнение о якобы полном разгроме Хеттской империи многочисленными завоевателями («народы моря», фрако-фригийцы с Балкан и др.) не выдерживает критики на фоне как ряда новейших историко-археологических исследований, так и в свете проведенного нами анализа иероглифических лувийских надписей Малой Азии и Северной Сирии. Сопоставление результатов этих исследований позволяет прийти к следующим важным выводам: 1. Падение Хеттской империи следует трактовать не как разгром этого государства, а всего лишь как гибель столицы и отторжение северных и западных областей Хетты. На значительной же части империи в скором времени образуются три крупных государства (Мелид, Каргамис и царство Хартануса). 2. В свете первого вывода представляется малообоснованным утверждение большей части ученых о вторжении крупного фрако-фригийского этнического элемента (т. н. «мушхов» или «протоармян») с Балканского полуострова в первые десятилетия после падения Хеттской империи. 3. Совместное выступление упомянутых в ассирийских источниках XII в. до н. э. мушхов, урумейцев и касков-апишлу против Ассирии рассматривается как более позднее отражение засвидетельствованного еще в хеттских источниках традиционного союза Хайаса-Ацци с племенным объединением касков. 4. Племена мушхов и урумейцев, вероятно, всего, являлись населением северо-западных областей исторической Армении, где, согласно хеттским источникам XV—XIII вв. до н. э., находилась страна Хайаса-Ацци. Возможно, что данные мушхи были одним из тех фрако-фригийских племен, которые могли изначально обитать в пределах индоевропейской прародины в непосредственной близости от армяноязычных племен Хайаса-Ацци.